

13. Եղբայրը քրոջն ասաց.
 <<Եթե ես ապրեմ իմ ապրածի կեսը, էլի երրորդ մասը և չորրորդ մասը, ապա կդառնամ 50 տարեկան>>: Քանի՞ տարեկան է եղբայրը:
 1) Հնարավոր չէ պարզել 2) 12 3) այլ պատասխան 4) 30
14. Գնացքը 800մ երկարությամբ թունելն անցնում է 40 վ-ում, իսկ սյան կողքով՝ 8 վ-ում: Որոշել գնացքի երկարությունը:
 1) 300 մ 2) 250 մ 3) 200 մ 4) 100 մ
15. Գրքի գինը սկզբից բարձրացրին 30%-ով, իսկ որոշ ժամանակ հետո նոր գինը իջեցրին 30%-ով: Քանի՞ տոկոսով փոփոխվեց գրքի գինը սկզբնական գնի նկատմամբ:
 1) չփոփոխվեց 2) թանկացավ 9%-ով 3) էժանացավ 9%-ով 4) թանկացավ 10%-ով
16. 2020 ճազարներից մի քանիսը սպիտակ են, իսկ մի մասը՝ սև: Հայտնի է, որ ճազարներից գոնե մեկը սև է, իսկ կամայական երեք ճազարներից գոնե մեկը սպիտակ: Ամենաշատը քանի՞ սև ճազար կարող է լինել:
17. Եռանիշ թվերի շարքում դրանցից քանի՞սը սիմետրիկ չեն:
 Բնական թիվը կոչվում է սիմետրիկ, եթե այն ձախից աջ և աջից ձախ կարդացվում է նույն կերպ (օրինակ՝ 121, 1331, 25452,.....):
18. Գտնել 1-2-3-4.....-2019-2020 արտահայտության արժեքի վերջին երեք թվանշաններից բաղկացած թիվը:
19. Քանի՞ եռանիշ թիվ կա, որոնց առաջին թվանշանը մեծ է երկրորդից:
20. Նկարում պատկերված յուրաքանչյուր ուղղանկյան ներսում գրված է նրա մակերեսը: Գտնել դատարկ ուղղանկյան մակերեսը:

24	9
8	